

զԱստուած տեսցես եւ ողորմութիւն գտցես բժիշկդ եւ հովիւդ, աղդ եւ լոյսդ, զի քեւ փառաւորեսցի Աստուածն բարձանց որ զքեզ յօրինեաց, զբարի գործս քո տեսողաց, զքեզ սիրողաց, որ յայդ խկ արարաք յԱրարչէն անձնիշխան կամօք ժառանգել զմարմնաւորս եւ զհոգեւորս ժամանակաւ իմն, եւ անդ անկէտ եւ անսահման յաւիտենիւ ընդ Քրիստոս Աստուած թագաւորել որոց խոստացեալն է, որ եւ զմեզ իւր ամէնառատ ողորմութեամբն արժանաւորեսցէ ամէնօրհնեալ իւրում թագաւորութեան տեսութեան, ամէն: Այլ ի՞նչ գրեմ, միայն թէ այսմ շաւղօք ընթանալն քո ինձ միտթարութիւն է, այսպիսի անուամբ յառաջանալն քո ինձ խնդութիւն է. մտածեա՛ թէ ո՛րքան գրեալ իցեմ քեզ թէ Մի՛ նախանձիր ընդ չարս, թէ ո՛րչափ աղազակեալ իցեմ թէ Մի ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն, թէ ո՛րքան բողոք՝ Որոց առակեալ իցեն ճանապարհք իւրեանց: Ոչ վեր վեհական, ոչ վայր ստորական, այլ միջասահման: Ոչ առաւել քան զկարն քո թռչիլ՝ իբրեւ ճշմարտախօս եմ եւ անարգիլ՝ որպէս զԱբտալ. ոչ չլով եւ աղօթիւք կեղծիւք եւ խոտիլ որպէս զՉօլաղ կռապաշտ, ոչ թէմէլսբզ ցառլաթան, չանկա մանկա, չթրա փթրա որպէս զԹօփալօղլի. ոչ լիցի վասն փառաց եւ մամոնայի ցանկութիւն քո, որ ի Հոգւոյն սրբոյ ընդունեցար եւ դարձեալ խնդրես ընդունիլ, այլ մուխնէթէ մահթճ օլմամաք, եւ թէ բարերարել ըստ կարեացդ որպէս հոգւոյդ է, նէ քէլամ. ողջ լեր:

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 15ա-15բ)